Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-1085[11]-06.10.2016-ՖՎ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԳՐԱՎԱՏՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՎԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 3-ի ՀՕ-43-Ն օրենքի 7-րդ հոդվածում կատարել հետևյալ լրացումն ու փոփոխությունը.

1. Հոդվածի 1-ին մասի «գ» կետը «արժեթղթեր (բացառությամբ բաժնետոմսերի)» բառերից հետո լրացնել «և ածանցյալ ֆինանսական գործիքներ» բառերով,

2. Հոդվածի 2-րդ մասի «ա» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) վարկային միջոցների ձեռքբերման համար տեղաբաշխել պարտատոմսեր, այլ արժեթղթեր կամ ածանցյալ ֆինանսական գործիքներ, ներգրավել միջոցներ այլ կերպ, քան նախատեսված է սույն հոդվածի 1-ին մասով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Ամփոփաթերթ

1-ին ընթերցմամբ ընդունված ««Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի և դրա ընդունմամբ պայմանավորված այլ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի

N	Առաջարկության հեղինակը	հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը	առաջարկությունը	Առաջարկության վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկի դիրքորոշումը
1	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Խաչատուր Քոքոբելյան (հնչեցվել է բանավոր նիստում՝ քննարկման ժամանակ)	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ եվ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 3-րդ և 6-րդ հոդվածներ	ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածը նախատեսում է գրավ դրված գույքի վրա առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու կարգը... [Հոդվածում] չկա կետ, որը ուղղակիորեն սահմանափակում դնի՝ բացառությամբ, եթե դա այլ տեղում գրավադրված չէ կամ ինչ-որ այլ խնդիր [գոյություն ունի]: Մատնանշեցիք, որ սա...արժեթղթերին է վերաբերում: Սեփականության իրավունքի առումով ... էական չէ, դա բնակարան է, թե 10 անգամ թանկ արժեթուղթ կամ բաժնեմաս, քան առանձնատունը: [Սա]	Հոդված 6-ը, որը լրացնում է ածանցյալ ֆինանսական գործարքներից բխող պարտավորության ապահովման համար գրավի արտադատական կարգով բռնագանձումը, լրամշակվել է: Հստակ նախատեսվել է, որ գրավի բռնագանձման առանձնահատուկ ռեժիմը տարածվում է **միայն ածանցյալ ֆինանսական գործարքներից** և ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին համապատասխանող գլխավոր համաձայնագրերի շրջանակում կնքված գործարքներից (ռեպո)

			սեփականության իրավունքի նկատմամբ զարմանահրաշ երևույթ է, այն սահմանափակում է սեփականության անձեռնմխելիությունը, որը երաշխավորված է Սահմանադրությամբ:	բխող պարտավորությունների ապահովման ժամանակ: Հարկ է նշել, որ լրացմշակված նախագծի դրույքները կիրառվում են այն դեպքում, երբ գրավի առարկա են հանդիսանում ածանցյալ գործքիները և դրամական միջոցները: Հստակեցվել է նաև, որ այս ռեժիմը տարածվում է միայն այն դեպքերի վրա, երբ գործարքի ոչ մի կողմ ֆիզիկական անձ չէ: Հետևաբար խոսքը վերաբերում է միայն ֆինանսական շուկաներում առևտրային գործունեությամբ զբաղվող անձանց գիտակցված գործարքների մասին, որոնց կնքումը պայմանավորված է կողմերի՝ շահույթ ստանալու կամ ռիսկերը հեջավորելու նպատակով: